

քերով լինել ազնիւ, մեծ, բարոյական, աշխատասէր և այլն մի շարք առարկանութիւններով զարդարուած, սակայն յաճախ նոյնքան նրա գործը, նրա կատարած աշխատանքը տարբերուում է իր ասածից։

Մեր իրականութեան մէջ խօսքի կողմից բաւականաչափ լաւ սպառազինուած հոգեւորներ ունինք, լաւ խոստումներով հայ իրականութիւնը դրախտի վերածող։ Թօսեցէք այդպիսիներից մէկի հետ և տեսէք ի՞նչ ծրագիրներ, ի՞նչ հիանալի խորհրդածութիւններ կը տայ ձեզ ամեն տեսակի հարցի նկատմամբ։

Բայց դրանով էլ միայն բաւականացէք, որովհետեւ երբ առաջարկէք, որ ցոյց տայ իր կատարած գործը այդ ուղղութեամբ, միայն լռութեան կը հանդիպէք կամ աւելի սովորական է՝ կը լսէք — շեղուած գործերն ուրիշները, մենք ծրագիր մշակողներ ենք։

Բայց նոր ասած խօսք չէ, որ շատ քան շատերու գործի մեռած է, և այդ աստիները միայն իրենց գոյութիւնը արդարացնելու համար են ծրագրներով ու խորհուրդներով երևան գալի, իրօք իրենց ոչ այս է հետաքրքրում, ոչ այն։ Ապացոյց դրան այն, որ մեր ժամանակում միքանի տարի առաջ զանազան ծրագիրներ մշակողներ այլ ուղղութեամբ էին խօսում, միքանի տարի յետոյ շնորհիւ բերմունքի և հացի խնդրի՝ այլ ուղղութեամբ։

Գործն ու խօսքը ներդաշնակող, մի ամբողջութիւն կազմող մեզանում ըիչ է պատահում և այդ ցաւայի երևոյթը իր բացասական կողմերով երևան է գալիս մեր հասարակական հիմնարկութիւններում։

Մտէք մեր որևէ հիմնարկութեան դիւանը, առէք որևէ գործ, արձանագրութեան մատեան և կը տեսնէք, որ դրածի համաձայն բաւական գործ պիտի կատարուած լինի հիմնարկութեան մէջ, որ հիմնարկութիւնը կանոնաւորուած առաջ գնացած պիտի լինի։ Սակայն այդ միայն գիրն է ասում, որ պէտք է լինի, բայց ո՞վ է իրագործում այդ շարք էջն, ո՞վ է հետևում այդ ասածը կատարելուն, իրագործելուն։

Ի դուր չէ, որ մեր ժողովներում որևէ հարցի մասին խօսելիս ահագին վիճաբանութիւններ են տեղի ունենում, թեր ու դէմ

կարծիքներ են արտայայտուում։ Մարդիկ տաքանում են, սղեորում և այնպէս ծրագիրներ, օրէնքներ մշակում, կարծես իրօք ամեն ինչ այդ խօսողների սրտին մօտ է։ Բայց բաւական է ժողովարարհից ստոր դուրս գնեն — խօսածները մնում են մատեանում եօթը կնքով կնքած ու մեռած տառ, իրականութիւնը լինում է այնպէս, ինչպէս բախտի բերմունքն է թելադրում։

Մեր ասածները ապացոյցների կարօտ չեն, որովհետեւ իւրաքանչիւր հիմնարկութեան բարեսիրտ ծառայող կը միայնէ, որ թուղթն ու իրականութիւնը միմեանցից տարբերուում են չափազանց շատ, որ խօսքի ու գործի մէջ ըիչ նմանութիւն է լինում սովորաբար։

Այդ մեծ, դաւայի տարբերութեան առաջն է, որ պէտք է առնենք, չպէտք է թույլ տանք, որ խօսուի ու գրուի այն, որ չենք իրագործելու, որ մեռած տառ է մնալու։ Այդպիսով և մենք ենք վարժուում թուլամորթութեան ու անգործութեան և հիմնարկութիւնն է մնում քաօս վիճակի մէջ։

Մի գործնական բային աւելի մեծ է, քան հարիւր ծրագիր, ասել է եւրօպացի գիտնականներից մէկը, և այդ խօսքը մեր իրականութեան համար միշտ կրկնելի մի ստացում է մընալու։

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵՄ ՏՈՒՐՁԸ**

Կիրակի, հոկտ. 14-ին, Թիֆլիզում շարունակուեց 1500-ամիայ հայ տառերի գիւտի և 400-ամեայ տպագրութեան տօնակատարումը։ Վանքի աւագ եկեղեցում հանդիսաւոր պատարագից յետոյ, որի ժամանակ երգում էր Ներսիսեան Հօգ. գպրանոցի քառաձայն խումբը, ամբողջ հայ հօգ. գասի մասնակցութեամբ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք եկեղեցու ընդարձակ բակում գպրացական վարչութիւնների, ուսուցչական խմբերի, աշակերտութեան ու բազմաթիւ ժողովուրդի ներկայութեամբ։ Հայր ձուղուրեանը բարոյ խօսեց ս. Էջմիածնի և Հայրապետական Աթոռի նշանակութեան մասին՝ շեշտելով, որ հայ ազգը շատ բան է կոր-

ցրել, այժմ ունի ս. Էջմիածին և Հայրապետական Աթոռ, պէտք է ամուր պահենք ու պահպանենք, որովհետև ներկայ պայմաններում առանց ս. Էջմիածնի ու Հայրապետութեան հայ ազգը իր գոյութիւնը չի կարող պահել և ապրել:

Էջմիածնում հայ տպագրութեան 400-ամեակի և հայ տառերի գիւտի 1500-ամեակի տօնակատարութիւնը կրում էր հանդիսաւոր բնոյթ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Վ-ը, միաբանները և պատգամաւորները շարաթօրը, հոկտեմբերի 13-ին, գնացին Ոչական, ուր և գրտնուում է ս. Մեսրոպի գերեզմանը:

Հանդիսաւոր պատարագից յետոյ 3000-ից աւելի ժողովուրդի ներկայութեամբ բացօդեայ կատարուեց տօնահանդէսը:

Կաթողիկոս Գէորգ Վ բացւած համարելով համազգային մեծ տօնի յօրելեանը՝ բացատրեց Մեսրոպի գիւտի ունեցած ազգեցութիւնը հայերի կույտութեան զարգացման վրայ:

Ճառեր խօսեցին Կանայեան, Այ. Քալանթար, Թորոսեան:

Օչականցիների կողմից հանդիսականները հիւրասիրուեցին նախաճաշով և կենացներ առաջարկուեցին Հ. Առաքելեանի, Լ. Շահազիզի, Կարապետ Եպիսկոպոսի, Մաքսուտեան վարդապետի, Ստ. Մալխասեանցի, Մանգակունի բահանայի և Այվատեան արքեպիսկոպոսի կողմից:

Կիրակի, հոկտեմբերի 14-ին, Էջմիածնում կատարուեց հանդիսաւոր հոգեհանգիստ գրի և տպագրութեան հանգուցեայ վաստակաւորների յիշատակին: Իսկ այդ օրը երեկոյեան Գէորգեան ձեռնարանում տեղի ունեցաւ դրական երեկոյթ Կաթողիկոսի ներկայութեամբ երեկոյթից յետոյ տրուեց ընթրիք:

Ստացուած են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ զանազան բաղաճներից և հիմնարկութիւններից:

Գարոցական ֆօնդի օգտին Էջմիածինը նուիրարեւել է 15.000 բուրլի:

Ռուսաստանի բոլոր հայաբնակ տեղերից— քաղաքներից, գիւղաքաղաքներից և նոյն գիւղից բազմաթիւ թղթակցութիւններ, նամակներ և տեղեկութիւններ են ստացուել, որոնցով յայտնուում են համազգային մեծ յօրելեանի փառաւոր կատարումը իրենց շրջաններում եկեղեցական և գարոցական հանդէսներով:

Բնական ծնունդը բոլոր երևոյթների մէջ առանձնայատուկ և ուշագրաւ է, որովհետև ոչ ըստ ամենայնի հնարաւոր է այն գիտական վերլուծութեան, ուսումնասիրութեան ենթարկել: Որքան և այդ երևոյթի բաղադրիչ մասերը առանձին-առանձին հնարաւոր է պարզարանել, այնուամենայնիւ երևոյթի ամբողջութիւնը մնում է որոշ չափով աւելցուած և այդ դրութիւնն է ահա, որ հիացմունքի առարկայ է դառնում:

**ՄՏԲԻ ԵՆՈՒՆԻՐ**

(Գրքերի գիւտի 1500-ամեակի առթիւ)

Ըստ ինքեան ծնունդը բոլոր երևոյթների մէջ առանձնայատուկ և ուշագրաւ է, որովհետև ոչ ըստ ամենայնի հնարաւոր է այն գիտական վերլուծութեան, ուսումնասիրութեան ենթարկել: Որքան և այդ երևոյթի բաղադրիչ մասերը առանձին-առանձին հնարաւոր է պարզարանել, այնուամենայնիւ երևոյթի ամբողջութիւնը մնում է որոշ չափով աւելցուած և այդ դրութիւնն է ահա, որ հիացմունքի առարկայ է դառնում:

Բոլոր ծնունդների մէջ սակայն ամենատեղծուածայինը և հրաշալին մտքի ծնունդն է: Բանականութեան հզօր ոյժը դարերից ի վեր անվերջ նուաճումներ է արել և մեր ժամանակում այդ նուաճումների թիւը կրկնապատկուել է այն աստիճան, որ միտքը այժմ յաղթական գնացք ունի և նրա առաջը կարծես թէ ոչ մի ոյժ չի կարող առնել: Ուժգին թափով է գործում նա, նրա ստեղծագործութիւնները մի մի գրաւչութիւններ են և հազարաւորներն են հիանում այդ անհասկանալի ոյժի փառաւոր յաղթութիւններով և էլ աւելի թուով անձինք են օգաւում, բարձրանում նրա նուաճումներով:

Բնութեան բոլոր ոյժերն էլ այժմ մտքի թագաւորութեան հղատակում են մեծ կամ փոքր չափով և նիւթը իրր այդպիսին, կարծես տկարանում, թուլանում է մտքի ոյժի առաջ: Մաքի ոյժի և նիւթի ոյժի յարաբերութիւնը այժմ գլխիվայր է դարձել, մինչդեռ նախապատմական շրջանում նիւթն էր իր օրէնքներով հրամանազրում մտքին և տկար միտքը սարսափում ու միայն հիանում էր բնութեան հզօր երևոյթների առաջ մինչ այն աստիճան, որ նոյնիսկ երկրպագում և աստուածացնում էր այդ երևոյթները, այժմ միտքն է իր օրէնքներով հրամաններ արձակում նիւթին և նրա գաղտնիքները մէկիկ-մէկիկ բանում, պարզում: Հէնց այս վերջին հանգամանքն էլ պատճառ է դառնում նիւթի տկարանալուն, որովհետև, երբ գաղտնիքը յայտնի է, հակառակորդի ոյժը նշանակում է թուլացել է:

Հին աշխարհի, աւելի ճիշտն ասած՝ նախադոյն կույտութեան մէջ գերիշխող տարրը նիւթին էր պատկանում, նիւթի ոյժերն էին, որ ստեղծում էին և՛ կրօն, և՛ բարոյականութիւն, և՛ կանոնաւորում էին մարդկանց յարաբերութիւնները: Այժմ հոգու—մտքի աշխարհի ոյժերն են գերակալ ոյժերը և եթէ ոչ ըստ ամենայնի մեր ժամանակի մարդկութիւնը համակերպել է այդ ոյժի օրէնքներին, զոնէ աշխատում, ձգտում է համակերպել նրանց: Զգտումը այժմ դէպի մտքի աշխարհի, հոգու աշխարհի աղնուալումն, ընդլայնումն է. մի աշխարհի,